ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՉԵՌԱԳՐԱՏՈՒՆ
(ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 3 1956

Տ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

# ՍԱՀԱԿ ԾԱՂԿԱՐԱՐ[1]

Հայաստանում քիմիայի զարգացման պատմությունն ուսումնասիրելու ժամանակ մեր ուշադրությունը գրավեցին Մատենադարանում պահվող երկու ձեռագիր (№№ 6247 և 9029), որոնք պատկանում են Սահակ Ծաղկարար Տեր-Գրիգորյանի գրչին։

Այդ ձեռագրերը լրացնում են այն պատկերացումը, որ մենք ունենք 19-րդ դարի կեսերին քիմիական տնայնագործության և տեխնո-քիմիական գիտելիքների աստիճանի մասին Երևանի նահանգում։

Հիշածս ժամանակամիջոցում քիմիական շատ սահմանափակ արդյունագործությունը Երևանի նահանգում բնորոշվում էր հետևյալ փաստերով.

Անցյալ դարի 50-ական թվականներին Երևանից 42 կիլոմետր հեռավորության վրա, Զանգվի մոտ, գործում էր ապակու մի փոքրիկ գործարան, որի համար անհրաժեշտ սոդան մշակվում էր Երևանի մոտ գտնվող Սարդարաբադի դաշտերի աղուտային բույսերից։ Սոդայի ստացումը այս բույսերից կատարվում էր ոչ միայն ապակու գործարանի, այլև բնակչության կենցաղային կարիքների համար։

Երևանի նահանգում զբաղվում էին նաև ծծումբի արդյունագործությամբ։ Ցուցմունքներ կան այն մասին, որ 60-ական թվականներին Արագածի հյուսիսային և արևելյան լանջերին արդյունագործում էին ծծումբ։ 70-ական թվականներին Շան-Գիրեյը Երևանի մոտ մի վայրում արդյունահանել է լավ որակի ծծումբ, որը իր ժամանակին ցուցահանդեսներից մեկում շահել է բրոնզե մեդալ։

Երևանի նահանգում եղել են նաև հանքավայրեր, որոնցից 40—50-ական թվականներին բնակիչները ստանալիս են եղել երկաթի և պղնձի արջասպներ։

Սրանց ավելացնենք զանազան տնայնագործական արհեստանոցները՝ կաշվի փոքրիկ գործարաններ, ոսկերչանոցներ, կլայնկչանոցներ, փոքրիկ ներկատներ, և կամբողջանա այն պատկերը, որ մենք ունենք քիմիագործության բնագավառում անցյալ դարի կեսերին Երևանի նահանգում։

Այս ամենը ապագայի համար որպես հետք կարող էր թողնել միայն արհեստավորական ձեռատեսքերը, որոնց մեջ հավաքված են ժամանակակից տեխնո-քիմիական գիտելիքները։ Այդպիսի տեսքեր են նաև Ծաղկարարի հիշատակածս ձեռագրերը։

Թեպետ և Մատենադարանում պահվող այդ ձեռագրերը պատկանում

---

[1] Զեկուցված է Մատենադարանի գիտական VII սեսիայում, 1954 թ. դեկտեմբերի 28-ին։

են Ծաղկաբարի գրչին, բայց նրանց մեջ հավաքված «խրատները» մեկի հեղինակություն չեն, այլ արհեստավորական փորձի ամփոփումներ, որոնք անցել են սերունդից սերունդ և իրենց ուժը պահել են նաև 19-րդ դարում։

Ինքը Սահակ Ծաղկաբարը հիշատակում է այն աղբյուրներից մի քանիսը, որոնցից նա քաղել է իր տեխնո-քիմիական գիտելիքները.— այդպիսիք են, օրինակ, Ակնեցի ժամագործ Առաքելը, Թիֆլիսեցի արծաթագործ Փարսադանը, նկարիչ Ալտլվհասը, Նուխեցի արծաթագործ Աստվածատուրը, և այլն։ Ինչպես տեսնում ենք, Սահակ Ծաղկաբարն իր գիտելիքները քաղել է իր ժամանակակից Անդրկովկասում ապրած արհեստավորներից ու տնայնագործներից։

Միքայել Նալբանդյանը շատ կարևոր նշանակություն էր տալիս Սահակ Ծաղկաբարի գիտելիքներին, հատկապես որդան-կարմիր ներկի մասին, և 1863 թվականի մայիսի 1-ին Ղազարոս Նալբանդյանին գրած իր նամակում ցավ է հայտնում, որ Ծաղկաբարը մեռավ «...և նրա հետ գերեզմանը ինչով (ներկ) պատրաստելու եղանակը», քանի որ, Նալբանդյանի կարծիքով, պետք է «...Արարատյան դաշտի հայ շինականների բարբառով մի փոքրիկ բրոշյուր հրատարակել և սովորեցնել նրանց, թե ինչպես պետք է աճեցնել և հավաքել որդան կարմիրը — իսկ դա կարևոր բան է այնտեղի աղքատ շինականների համար»։

Միքայել Նալբանդյանի այս գնահատականը Սահակ Ծաղկաբարի գիտելիքների մասին ցույց է տալիս, որ մենք Սահակի տեսությունը պետք է դիտենք որպես իր ժամանակի համար ակտուալ պրակտիկ գիտելիքների ժողովածուներ։

Նույնն է վկայում նաև այն ուշադրությունը, որ նվիրում է Ալիշանը իր «Այրարատում» Սահակ Ծաղկաբարին և նրա գիտելիքներին որդան կարմրի մասին։

Եթե Մ. Նալբանդյանին հայտնի լիներ Սահակ Ծաղկաբարի վերոհիշյալ տեսությունը, ապա կարելի է ենթադրել, թե Նալբանդյանը կառաջարկեր, լեզվական խմբագրումից հետո, հրատարակել և Արարատյան դաշտի հայ շինականների մեջ տարածել հենց Սահակի տեսությունը, մանավանդ որ Սահակի տեսությունը բացի որդան-կարմրից ներկ պատրաստելու խրատներից, իրենց մեջ պարունակում են ուրիշ շատ արհեստներին վերաբերող խրատներ ու գիտելիքներ։

Մատենադարանի № 6247 ձեռագիրը, որը կրում է «Բազմավէպ» խորագիրը՝ ինքնակենսագրական բազմաթիվ նյութեր է պարունակում։ Այդ ձեռագրից մենք իմանում ենք, որ Սահակ Ծաղկաբարը ծնվել է Երևանում 1780 թ., քահանա Մատեոսի Տեր-Գրիգորի ընտանիքում։ 17 տարեկան հասակում տարվել է էջմիածին սովորելու։ Այնտեղ նա ապրել ու աշխատել է վատ պայմաններում։ «Ոչ օրինաւոր տեղաշոր, ոչ խալի, ոչ քէչա և ոչ կարպետ, ոչ հին և ոչ նորն՝ ոչ ունէի,— պատմում է Ծաղկաբարը,— մին հատ դոշակ կայր 2 տեղ մեծ ու փոքր ծակ. և այն ծակ տեղի վերայ էի նստում, որ եկողն չի տեսնուն, որ ինձ, իմ արհեստիս կեօրայ ամոթ չի լինի»[1]։ Այն խուցը, որտեղ ապրելիս և աշխատելիս է

[1] Ձեռագիր № 6247, էջ 9բ։

եղել Ծաղկաբաբը, ձմեռը չի ասքացվել։ Առաստաղից շարունակ հող է թափվելիս եղել։ Խուցը եղել է մութ. հաճախ Ծաղկաբաբը լույսի պատճառով աշխատել է բաց դռան մոտ, որի հետևանքով ստացել է «ծնկացաւեր զանազան» (հավանաբար ռեմատիզմ)։ Նրա բոլոր դիմումները աշխատանքի պայմանները լավացնելու մասին մնացել են անհետևանք, որի պատճառով նա իր կյանքի վերջում, հակառակ արգեն իր լավ կյանքի (նա հասել էր եպիսկոպոսի աստիճանին), այնուամենայնիվ դառնում է կատաբյալ հաշմանդամ. փոխադրվում Երևան, իր հոր այգիները, որոնք մինչև վերջերս էլ կոչվելիս են եղել «Ծաղկաբաբի այգիներ», և հենց Երևանում էլ փախճանվում է 1858 թվականին։

Ծաղկաբաբը մեծ արժեք էր տալիս արհեստներին, և ոչինչ չէր խնայում գրանք յուրացնելու համար։ «Ասացէք ինձ,— գրում է նա,— թէ ամենայն Եւրոպայ և հզօր ազգութիւնք, որ պայծառ անուն ունին, ուստի է պայծառութիւնք նոցա. ոչ ապաքէն արհեստաւորքն են, որ զանազան հնարս գործ ածեն իւրաքանչիւր քաղաքի գործաւորքն, իւրաքանչիւր տեսանց. ես ըստ իմ տկար կարեցս ոչ խնայեցի աղքատ քսակին իմոյ, և ոչ խնայեմ ընաւ, յաղագս զանազան բանից ծախուց փորձելոյ և գիտնարն գտանելոյ»[1]։

Ծաղկաբաբը եղել է Անգրկովկասի մի շարք քաղաքներում և ամենուրեք նոր նյութեր և նոր գիրք-ձեռնարկներ է փնտրել։ Այսպես, նա պատմում է, որ 1822 թ. գնացել է Ելիզավետապոլ (Կիրովաբաբ) քաղաքը, այնտեղ գտել է մի քար, որը Առաքել պատմագրի կողմից անվանված է «խամանի», որ նույնն է թե՝ լերդաքար. դրա հետ միասին գտել է սև գույնի քար, որը ինքն անվանել է «հանքային մելան», որովհետև նրանից սև գույնի շատ լավ թանաք է պատրաստելիս եղել։ Մի այլ տեղ, երբ նա գտնում է «գահնայ ֆոտնկի» կոչված հազվագյուտ և թանկագին քարը, փնտրում և գտնում է մի գիրք, որտեղից իմանում է այդ գահնա քարի հետ վարվելու եղանակն ու նրա ստացումը։

Թիֆլիսում եղած ժամանակ Հակոբ Շահան-Զրպետյանի մոտ ծանոթանում է մի գրքի, որը լի է եղել զանազան արհեստներին վերաբերող գործիքների և մեքենաների գծագրերով։

Սահակ Ծաղկաբաբը այդ գրքից բազմաթիվ գործիքների սխեմաների արտանկարումներ է արել, իր հետագա ձեռնարկումներում օգտագործելու համար։

Կարծում ենք, այսքանը բավական է Սահակ Ծաղկաբաբին, որպես ձեռներեց և հետաքրքրասեր մարդ բնութագրելու համար։ Այժմ տեսնենք, թե ինչ կոնկրետ ձեռնարկումներ է արել Սահակ Ծաղկաբաբը Էջմիածնում, քիմիական անալիզագործության առպարեզում։

1836 թ. Սահակ Ծաղկաբաբը փորձ է անում Էջմիածնում հիմնելու թղթի գործարան։ Ինչպես ինքն է պատմում մեր հիշատակած «Բազմավէպում», թղթի գործարան հիմնելու միտքը նրա մեջ առաջանում է Էջմիածնի կազմատնից գեն գցվող թղթի կտրուկները, որոնցով տաքացնում էին բաղնիքի ջուրը, ավելի ռացիոնալ օգտագործելու ցանկությունից։ Ահա թուղթ ստանալու նրա առաջին փորձի նկարագրությունը, «...զկոտորակ-

[1] Ձեռագիր № 6247, էջ 18բ։

սքն թղթոց եղի ի մէջ ջրոյ թոջոց, և հանեալ եղի ի մէջ հալանկի և սանտի տոռամբ այնքան ծեծեցի, որ եղև իբրև զմածուցիկ իմն, և հանեալ եղի մաքուր աման, և լցի նորա վերայ ջուր. խառնեալ եղև կաթնանման, ուշիկ ուշիկ հանեալ, եղի ի վերայ կտոր մի մահուտի, ի վերայ տախտակի եղեալ, տարածեցի ձեռօքս, դարձեալ մահուտ և հարթ հաւասար տախտակ և քար ծանր եղի ի վերայ նորա, մինչև քամեցաւ լաւապէս ջուրն, և հանեալ չորացուցի, կոկեցի, գրեցի և տեսի որ ընդունեց զգիրն և ոչ ծրեցաւ ուրախացայ. դարձեալ ուրախացայ և արարի Գ (3) հատ՝ մեծն կես թաղաղայի չափ»[1]։

Սահակի խնդրանոք ապարանի տեսուչը նրա պատրաստած 3 կտոր թղթի վրա ապագրում է Էջմիածնի նկարը։ Սահակը այս նկարները ու իր պատրաստած պռատաշը, սոսինձը և այլ նյութերը 1836 թ. դեկտեմբերին ներկայացնում է Հովհաննես կաթողիկոսին, առաջարկելով իր ծառայությունները այդ նյութերի արտադրությունը կազմակերպելու համար։ «Եւ յաւելում խոստանալ, եթէ զսոյն նորագիւտ արտադրութիւն իմ վնասփառ օձութիւն Ձեր ևս համարելով օգտաւէտ հրամայեսցէ պատրաստել զգործիս ինչ կարևորս առ ի նոյն, կարող եմ շնորհիւ Ձեր զլաւագոյնն կամ զնրբագոյնն ևս արտադրել»[2]։ Այնուհետև «Բազմավէպից» տեղեկանում ենք, որ Սահակը 1837 թ. հունվարին իր գծագրած սխեմայով և իր ծախքով շինել է տալիս թղթի գործարանի համար անհրաժեշտ առաջին գործիքը, բայց ամբողջ ծախքը [անօգուտ է անցնում. Սահակը գրում է. «Եւ այս չարիս խարճն զուր և ընդ վայր գնաց. ես կամեցա ընդ նոսին, այսինքն Փարէժ քաղաքի եղելոցն նմանացնեմ, բայց ...հատա ու բարակ է մէկ դին (ասեն), վայ գա բ[արակ] մ[անողին]»[3]։

Սահակը, սակայն չի վհատվում, և ինչպես իմանում ենք, Հ. Աբրահամյանի հրատարակած նամակներից, հետագայում էլ, 1837 թ. փետրվարին, հունիսին և հուլիսին դիմում է այս անգամ արդեն Սինոդին՝ թղթի գործարան կազմակերպելու իր առաջարկներով։ Բայց ըստ երևույթին ավելի շահավետ է եղել թուղթը ստանալ այլ քաղաքներից, քան Էջմիածնում կառուցել թղթի գործարան։ Համենայն դեպս Էջմիածինը չի ընդառաջում Սահակ Ծաղկաբարին։

Քիմիայի պատմության առումով ավելի հետաքրքիր են, սակայն, Սահակ Ծաղկաբարի մյուս ձեռնարկությունները՝ պռատաշի, զանազան ներկերի և մանավանդ որդան կարմրի շուրջ եղած նրա աշխատանքները։

Որդան կարմիրը Հայաստանում հայտնի է շատ վաղուց. նա նույնիսկ արտահանության նյութ է եղել, սկսած դեռ առաջին դարից[4]։ Սակայն քննածս ժամանակամիջոցում նրա արտադրությունն ընկել է և մարդիկ մոռացել են անգամ որդան կարմիր ներին էկստրագիրելու եղանակները։

---

1 Ձեռագիր № 6247, էջ 20բ։

2 Նույն տեղում, էջ 21ա։

3 Նույն տեղում, էջ 21բ։

4 Մելքիսեթ-Բեկ Լ., «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», ՀՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ)՝ № 2—3, Երևան, 1946 թ.։

Երևանյան նահանգը Ռուսաստանին միացվելուց հետո, ռուս կառավարությունը հետաքրքրություն է ցուցաբերում դեպի որդան կարմիրը։ Հատկապես այդ գործով զբաղվում է բարոն Գ. Վ. Ռոզենը։ Իմանալով, որ կարմիր որդանի լավագույն մասնագետը Սահակ Ծաղկաբաբն է, որն այն ժամանակ արդեն եպիսկոպոս էր, Գ. Վ. Ռոզենը հանձնարարում է «Հայկական մարզի պետ» կնյազ Բեբուտովին Ռոզենի անունից խնդրել հայոց կաթողիկոսին թույլ տալու, որ Սահակ եպիսկոպոսը գնա որդան կարմրի հավաքման վայրը և օժանդակի հավաքը լավ կազմակերպելու և ներկը ստանալու գործին։

Ինչպես իմանում ենք «Բաղմավէպից», Սահակն իր ծառայությունն է մատուցում ռուս կառավարությանը, որի համար 1834 թ. նվեր է ստանում ամեխուտյա ադամանդակալ մատանի, իսկ 1839 թ. հունիսից կայսրը նրան տարեկան 200 ռուբլի ցմահ թոշակ է նշանակում։

Անշուշտ, Սահակը պարգևին արժանացել է ոչ թե որդան կարմրի հավաքումը կազմակերպելու համար, այլ քիմիագործական այն վարպետության համար, որով նա կարողացել է կարմիր որդանից էքստրագիրել հարկավոր ներկը։ Այդ գործով նա զբաղվելիս է եղել դեռևս 1815 թվականից և շատ հավանական է, որ ռուս պետության ուշադրությունը որդան կարմրի վրա հենց ինքը Ծաղկաբաբը հրավիրած լինի։ Բանն այն է, որ Սահակին հայտնի է եղել պատենտների շահավետությունը և այդ տեսակետից ամեն մի գյուտի մեջ պրիորիտետի ապահովման կարևորությունը։

1836 թ. դեկտեմբերին Սահակի գրած մի նամակում կարդում ենք. «Եւ քանզի օրէնք են յամենայն լուսաւորեալ ազգս՝ և ի տէրութիւնս զայսպիսի նորահնար գիւտս՝ որք ըստ տեղւոյն պիտանի և օգտաւէտ համարել ունիցին՝ յայտնել կամ առաջի առնել նախապետաբար վեհագունեցըն, ամին իրի և ես՝ ոչ նուազ օգտակար սրբոյ աթոռոյս համարելով զայս իմ գիւտ՝ արժան դատեցայ առաջի առնել ամենախոնարհաբար ընդ այսմ Ձերումդ Վեհափառութիւն սուրբ օծութեան ի տեսութիւն»[1]։

1830 թ. հունիսին գրած նամակում կարդում ենք. «...խնդրեմ ամենախոնարհաբար, ողորմած տէր, յայտնել ուր հարկն և իցե, ի պարծանս անուան Ձերոյ, զբազմամեայ զիմ զայս աշխատանս ի գիւտ հնարից այսր ներկագործութեան, որ գաղտնի և թագուն իմն է և ոչ ծանուցեալ ինչ բազմաց ի ժամանակի անտի Պարսից ցայսօր։ Այլ ես անա իմոյս ամենաջերմեռանդն յօժարութեամբ ընծայեմ Ձերումդ պայծառափայլութեան՝ յուսալով շնորհիւ Ձեր ողորմութեան, իմիք արժանանալ ի բարձրագոյն Դրանէ հզօր տէրութեան...»[2]։

Անա այս շահախնդրությունն է անշուշտ դրդել Սահակ Տեր-Գրիգորյանին գիմելու ռուսաց մեծ պետությանը, և ինչպես տեսնում ենք վերջինս վարձահատույց է եղել նրան՝ տարեկան 200 ռուբլով։

Սահակ Տեր-Գրիգորյան Ծաղկաբաբը անձամբ զբաղվել է որդան կարմրից ներկ ստանալու գործով և այդ ուղղությամբ կատարել է բազմաթիվ քիմիական փորձեր։ Նա այդ փորձերը նկարագրել է 1830 թ. հունիսին

[1] Ձեռագիր № 6247, էջ 21ա։

[2] Մելքիսեթ-Բեկ Լ., «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», ՀՍՍՌ Գիտ. ակադ. Տեղեկագիր (հասարակական գիտություններ), Երևան, № 2—3, էջ 22։

գրած իր նամակում, որտեղից մենք իմանում ենք, որ նա իր փորձերը բաժանում է երկու խմբի — կարմիր որդը սպանելու ձևերի և սպանված որդերից կարմիր ներկը էկստրագիրելու եղանակների։

Պարզվում է, որ որդան կարմրի սպանելու եղանակը իր ազդեցությունն է ունեցել ներկ ստանալու գործի վրա։ Այսպես, նա փորձել է որդը սատկացնել սառը և տաք քացախով, քացախով և կրափոշիով, մաքուր կրաջրով, գինիով, ծծմբային գազով, և միայն կալաքարի (պոտաշի) ջրով ու գինիով նրան հաջողվել է բավարար արդյունքների հասնել։ Այնուհետև նա ստացել է տարբեր ներկեր։ Պոտաշով սատկացրած որդերից նա պատրաստել է կնքաներկեր և ջրաներկեր։ Ծաղկանկարների համար նա ավելի լավն է համարում գինու միջոցով սատկեցրած որդերից ստացած ներկերը, «որ լաւագոյն գեղեցիկ և պայծառափայլ երևէր քան զեղեալ յորդանէն մեռուցելոյ ի ջուր կալաքարի»[1]։

Պետք է ցավով նշեմ, որ Ծաղկարարի «Բազմավէպից» պակասում են զգալի թվով թերթեր, որոնք, ով գիտե, պարունակում էին հենց գործնական հրահանգներ որդան կարմիր ներկ պատրաստելու մասին։

Այս առթիվ Սահակ Ծաղկարարի ազգական Էմին Տեր-Գրիգորյանը գրում է. «Ինչպես երևում է այս ընագրից հանված են շատ երեսներ, մինչև անգամ կարծում եմ, հանված է միջից մի ամբողջ տետրակ մոտ 14—16 թերթից, կամ մի քանի տետրակներ այդքան թերթերից։ Այդ ապացուցանվում է նրանով, որ 16-րդ թերթի վերջին երեսը վերջանում է 1815 թվականով, իսկ 17-րդը սկսում է անկապ և 1833 թվականով։ Երևում է նաև ձեռագրում եղած երկու տետրերի կարից և թղթերի գույներից. եթե իրոք հանված են այդպիսի տետրեր, պետք է կարծել, որ այդ արված է հորս մահից հետո էջմիածնում միաբանների ձեռքով, կամ երբ ուղարկեցի Վենետիկ հայր Ալիշանին՝ այնտեղ։ Ես ավելի շատ առաջին կարծիքին եմ քան երկրորդ»։

Ավելացնեմ այստեղ, որ եթե այդ թերթերը չեն պոկված գործնական աշխատանքի հրահանգներ պարունակելու պատճառով, ապա նրանք պոկված են այն պատճառով, որ Սահակ Ծաղկարարի «Բազմավէպը» բազում մերկացումներ է պարունակում այն ժամանակներում նրա շրջապատի մարդկանց վարք ու բարքի, նիստուկացի մասին։ Զուր չէ, որ այդ վարքից ու բարքից վրդովված, մի օր Ծաղկարարը իր օրագրում բացագանչում է. «...Տես դու, ով բարեմիտ հայր և եղբայր, արժանի՞ է կազէթիւ հրատարակել բանս այս, թէ ոչ։ Ո՞ր աստուածն կարե տանել, ասեն աշխարհականք...»[2]։

Ծաղկարարի «Բազմավէպից», ինչպես և նրա ձեռագրից (№ 9029) իմանում ենք նաև, որ Ծաղկարարի ժամանակներում ուրիշներն էլ են զբաղվել կարմիր որդանով. այդպիսին է եղել, օրինակ, Եփրեմ կաթողիկոսը, սակայն, բան երևույթին, նրանց մեջ այդ գործում ամենաձեռներեցն ու հմուտը եղել է Սահակ Տեր-Գրիգորյանը։

---

[1] Մելքիսեթ-Բեկ Լ., «Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից», ՀՍՍՌ Գիտ. ակադ. «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), № 2—3, Երևան, էջ 21։

[2] Ձեռագիր, № 9029, էջ 31։

Ծաղկաբաբը ոչ միայն որդան կարմրով է զբաղվել, այլև բազմաթիվ այլ ներկերով։ Նա մի ամբողջ տետր ունի գրած զանազան ներկեր ստանալու եղանակների մասին (ձեռագիր № 9029)։ Որդան կարմրից հետո, այդ ներկերից նրան ամենից շատ զբաղեցրել է լաջվարդ (կապույտ) կոչված ներկ պատրաստելու գործը։ Այս գործը նա սովորել է պարսիկ պալատական մի նկարչից, որի հետ մի քանի անգամ հանդիպում է ունեցել Էջմիածնում (1810 և 1815 թվականներին)։

Յուրացնելով լաջվարդ ներկի տեխնոլոգիան, Ծաղկաբաբը զանազան կապեր է հաստատում ներկի համար անհրաժեշտ ելանյութերը ձեռք բերելու համար։ Այսպես, նա կապվում է «Երևանի պղնձահանքի վերակացու» ոմն Ղազարի հետ, տալիս է նրան «լաջվարդի քարի» մի փոքր նմուշ և, այնուհետև, նրանից ստանում է իրեն հարկավոր քանակությամբ ելանյութը։ Ճիշտ է, վերջինիս որակը նրան այնքան էլ չի բավարարում, բայց նա բազմաթիվ փորձերով գտնում է մշակման օպտիմալ պայմանները և ստանում է որակյալ ներկ. Սահակը գրում է. «Բայց փորձ նորա բազում անգամ զանազան կերպիւ ասի և տեսի միևնույն բանն առնէր ի գործ արկանել»[1]։

Ծաղկաբաբի «Բազմավէպից» երևում է, որ նա չի բավականացել լաջվարդ ներկը միայն իր գործածության համար պատրաստելով։ Նա այդ ներկը պատրաստել է այնքան, որ երբեմն և վաճառել է բավական թանկ գնով. այսպես, նա պատմում է. «1818 ամին Առաքել եպիսկոպոս ոմն թէ քիրտաղու եկն ասա վասն եպիսկոպոսութեան, նա խնդրեաց յինէն 100 դրամ լաջվարդ, որ թէ կամենայի՝ կարող էի տալ կէսն, բայց ոչ եառ այնքան. կարծելով թէ վասն թանկագին լինելոյն ոչ առնէ. խոստացայ տալ 10 դրամ. որ եառ նմա, դրամն 5 ուսալի. տուս դու ասա, եթէ մինն ոչ կորուսանէի, դիա՞ դի կարէի գտանել այնքան ուսալն»[2]։

Իր պատրաստած լաջվարդով նկարած մի քանի նմուշներ է Սահակը թողել հիշածս տետրում, որոնք ցույց են տալիս, թե որչափ նուրբ ու գեղեցիկ կապույտ է եղել նրա պատրաստած լաջվարդը։

Կարող է թվալ, թե Սահակ Տեր-Գրիգորյանի հետաքրքրությունները թղթի գործարանի և ներկերի նկատմամբ բխել են նրա նկարիչ լինելու հանգամանքից։ Այդ կլիներ ճիշտ, եթե մեզ նրա տետրից հայտնի չլիներ, որ նա հետաքրքրվել է նաև տնայնագործական քիմիայի այլ ընագավառներով։ Նա լուրջ կերպով զբաղվել է պոտաշ պատրաստելու գործով. այդ մասին Սահակ Ծաղկաբաբը գրել է. «Իմովս սեպհական աշխատութեամբ հնարեալ ունիմ նաև զպոտաշն ասացեալ սպիտակ ազն, յաղագս լուանալոյ զդիրս տպարանի»[3]։ Նա զբաղվել է նաև արծաթաջրելու, ոսկեջրելու, սոսինձ պատրաստելու, պոտաշ պատրաստելու, երկաթ հալելու, երկաթ մխելու, կաշի վարելու և այլ հարցերով։

Ըստ էության Սահակ Ծաղկաբաբ Տեր-Գրիգորյան Երևանցին եղել է մի ձեռներեց և առաջադեմ մարդ, որը քիմիագործական հարցերով զբաղվել է ոչ միայն ունենալով անձնական նյութական շահախնդրություն, այլև «ազգը լուսավոր ազգությունների ուղիներով տանելու» երազանքներ։

[1] Ձեռագիր, № 6247, էջ 19ա։

[2] Նույն տեղում։

[3] Ձեռագիր № 6247, էջ 21ա։

Թիֆլիսում Շահան-Զրպետյանի մոտ իր տեսած գրքի մասին նա գրում է, որ այն «...լի էր զանազան պատկերօք և ամէն մին պատկեր զանազան գործառնութիւնս աշխարհի ցուցանէր և ասէր՝ այս գործաւորքն են Փարէժ քաղաքի՝ կոյրքն և զանազան ցաւագնեալքն, որ նորին կայսեր հրամանաւն ժողովեալ են ամենայն կոյրք և կաղք և այլքն ամենայն, և կարգեալ են ի վերայ նոցա գործավար ուսուցիչք, որոց ասն ուսումն առնուլ և գործ գործել, որպէս տեսի ես այնմ գրքոջն, և նկարեցի ի նոցանէ զքանի մին պատկերսն, ոյք էին տպարանի գործաւորքն, մրագարին, չարխ պտոյտ տուօղքն, գրաշարն, մամլոյ քարշօղն, գիրգ կապմողն։ Ուսուցանողն կանգնեալ առողջ մարդ և ուսանողն կոյր՝ ոք նրստեալ աթոռով ուսանէր ի վարպետէն... մինչ տեսի զնոսա, նկարեցի ի նոցանէ զքանի մի պատկերսն, որ գրեցի գործոց անուանքն, և այսու ձևով կամէի և ես առնել»[1]։

Ծաղկաբարի «Բազմավէպից» երևում է, որ իր նախագծած թղթի գործարանում նա մտադիր էր նույնպես հաշմանդամներին գնելու հանրագուտ աշխատանքի մեջ. այսպես, թուղթը տրորող «չարխի» վրա նա մտադիր էր աշխատանքի դնել կույր Հակոբին, մինչև որ կպատրաստվեր ջրով պտտվող «չարխը»։

Որդան կարմրի հավաքման գործը կազմակերպելիս, նա մտահոգվում էր այդ գործում գյուղացիների շահերի հոգսով։ Որդան կարմրի հավաքը կազմակերպված էր այնպես, որ շրջանի անգամ ամենահեռավոր գյուղերից մոլրովները հարկադրաբար դեպի որդան կարմրի տեղը՝ Խոր-Վիրապն էին քշում պարտադիր թվով գյուղացիներ, առանց համապատասխան վարձահատույցի։ Ծաղկաբարը առաջարկում է հավաքման գործի իր ծրագիրը, որով ոչ միայն պետք է հեշտանար գյուղացիների դրությունը, այլև նրանք այդ գործում դառնալու էին նյութապես շահագրգռված։ Նա գրում է. «Ի հեռաստանէ եկեալ մշակքն՝ զուր անցուցանեն ժամանակն տրտնջալով. և լաւ չէ որ իւրեանց բանից և գործից յետ են մնում և շատ մեղք է նոցա բերելն. լաւ դայրաթով մարդն մէկ խատիլ չէ կարելի որ ժողովի. 2—3 հոգով որ աշխատեն հազիւ կարեն ժողովել մին խատիլ...

«Թէ լսեն ինձ վասն մշականց նորին, որ ժողովք ժողովրդոց մեծ բազմութեամբ ժողովում են (ասացի) զուր տեղն. չէ օգուտ նորին տէրութեանն, այլ այս է օգուտն, զոր ես վասն նորա տնօրինեցի, և տնօրինեմ. այն գիւղն, որ գտանի որդն, նորա գիւղացւոց այն ամսոյն ապատութիւն տան թագաւորական հարկէն և հրամայեն նոցա՝ տունն որ 10 հոգի ունելի լինեն, նոքա տան 5 կամ 4 խատիլ. այն որ 5 կամ 8 հոգիք լինին՝ նոքա տան 3 խատիլ, այսպէս ջամ առնելով որ ժողովեն, տես թէ քանի՞ քանի՞ օգուտ լինի տէրութեանն և ժողովրդոցն, առաւել նոցա, որք ի հեռաստանէ գան և ոչ ժողովեն բնաւ, այլ ըստ հարկի պահանջմանն տան նոքա, թէ՝ մեք այսքան այնքան մշակք տուաք այսինչ ժամանակի, որ շատ ծանր է, և զուր նոցա գալն ի հեռաստանէն»[2]։

Ի պատիվ Ծաղկաբարի պետք է ասել, որ որդան կարմրի կապակցությամբ Արարատյան դաշտի շինականի անտեսական վիճակի մասին

---

[1] Ձեռագիր № 6247, էջ 21բ։

[2] Նույն տեղում, էջ 18ա—18բ։

նրա ցուցաբերած այս հոգոը համահնչուն է մեր հաղորդման սկզբում բերված Նալբանդյանի նամակում արտահայտված նույն հոգսի հետ։

Ցավոք սրտի պետք է նշել, որ Ծաղկաբաբի համաբյա բոլոր ձեռնարկումները, բացի որդան կարմրի գործից, հանդիպել են էջմիածնի ոչ միայն սառն անտարբերության, այլև համառ դիմադրության, և առիթ են տվել Ծաղկաբաբին գրելու. «Բայց զինչ օգուտ գտանողին այսպիսի բանքս, որոյ վասն արժանի է ասել. հառա ու բարակն այ մէկ գին, վայ գա բարակ մանողին»։